ասում է գլխավոր մուտքը պսակող քարի վրայի մակագրությունը՝ «ի վայելումն որդի մելիք Փարմազին» փորագրված է 1836 թ.՝ Հանի օրենքի կիրառումից մի շորս տարի առաջ։ Որմնադիրը օգտվել է լավ տաշած քարից, օգտագործել է տեղական ճարտարապետական ձևերը— առջևից դալանեէրով՝ պատշգամբներով երկարացած քարայրներ՝ բատակեէր, երկար թաղակապ[9] ընդունարան, երկշար ախոռ, գեղեցիկ մուտք... Ամեն մանրամասնության մեջ նկատվում է նյութական ապահովություն և լիություն։ Սակայն, այն, որ այս մելիքի բնակարանը կառուցված է գյուղամիջին և հեռացված է հին տեղից, բերդի քերծի տակից, նշան է մելիքական իշխանության բնույթի մեջ կատարված փոփոխության՝ նա հանդես է գալիս ոչ իբրև ռազմական դասակարգի անդամ, այլ ուժեղ տնտեսություն վարող կալվածատեր։ Այդ շենքը կողմնակի ապացույց է այն իրողության, որ Ղարաբաղի պրովինցիայի զանգեզուրյան մահալներում նույնիսկ ոչ մահալական, այլ մասնավոր շրջանի մելիքի նյութական կացությունը Մեհտի-Ղուլի-խանի փախուստից հետո բավականաչափ ամրացել էր։ Դա հետևանք էր այն բանի, որ նաև մելիքներն իրենց կողմից ցուցաբերում էին լիակատար ըմբռնում նորահաստատ ռուսական իշխանության ծրագիրների և պատրաստակամություն այդ ծրագիրների կենսագործմանն օժանդակելու։

Վերևում տեսանք, թե որպիսի մասնակցություն ունեցավ Սիսիանի Մելիք-Թանգին Շուշուց դեպի Նախիջևան Գորիսով և Բռնակոթով-Սիսիանով (Բիչանաղով) ճանապարհի բարելավման և դյուրացման ռուսական կառավարչական ծրագրի իրացման գործում։ Նա շինել է տվել Որոտանի (Բազարչայի) վրա երկու կամուրջ, մեկը՝ Դավիթ-բեկի բերդի տակ, մյուսը՝ Անգեղակոթի մոտ, և լեռնանցքի մոտ բարվանսարա՝ ձմեռվա ձյունից և բքից պատսպարվելու համար. սրանք մինչև այսօր էլ նրա անունն են կրում։ Այնուհետև, արդեն 1822 թ. հետո, Սիսիանի մելիքները առանձնապես աշխատեցին այդ ճանապարհի ուղղությամբ գյուղերը բազմամարդացնելու և ամայի գյուղերը նորից մարդաբնակ դարձնելու։ Հանգամանքներն այդ բանին նպաստեցին՝ ըստ Թյուրքմենչայի դաշնագրության պարսկական անդրարաքսյան գավառներից հայկական մի հոծ բազմություն, օգտվելով այդ դաշնագրության համաձայն ռուսական նոր գրաված երկրներն ազատ տեղափոխվելու հնարավորությունից, պարսկական պետության սահմաններից քաշվեց Արաքսի ձախ ափը, թե Մակու-Խոյ-Մարաղա և Թավրիզի շրջաններից և թե Ղարադաղի խանությունից։ Այդ մարդկային հոսանքից բավականին նշանավոր շիթերն անցնելով թե Սիսիանով (Բիչանաղով) և թե ուղղակի Արաքսի վրայով հարավից՝ տեղավորվեցին մելիքների աջակցությամբ առավելապես Սիսիանի կողմերում, մի մասը Զավնդուրի և Մեղրու գետերի ավազաններում։ Դրանցից մանավանդ սևասարցիք (զարադաղցիք) պիտի Զանգեզուրում գտնեին իրենց ավելի հարազատ կենցաղային միջավայրը և ամենից արագ ստեղծեին սերտ հարաբերություն տեղական հին բնակչության հետ, որի հետ դարեր շարունակ ունեցել էին մերձավոր կապակցություն։ Այդ նոր հայկական տարրը տեղականից տարբերվելու համար հայտնի է այսօր «կլան» անունով։ Սակայն այդ անունով

---

[9] Նման թաղակապ սրահում ապրում էր մելիքի եղբայրը Տաթևում, Օրբելեան Օսեփ-բեկը։ Նրա շենքը կառուցված է ավելի վաղ՝ 1826 թ.։